

**Մեղրիի սահմանային անցակետի արդիականացում**

Վայր:	Հայաստան
Ծրագրի համար:	50310
Գործունեության ոլորտ:	Տրանսպորտ
Ծանուցման տեսակը:	Հանրային
Բնապահպանական կատեգորիա:	Բ
Խորհրդի՝ նախատեսված ամսաթիվը:	27 նոյեմբերի 2019
Կարգավիճակ:	Քննարկված հայեցակարգ
Փաստաթղթի ներկայացում:	16 օգոստոսի 2019

**Ծրագրի նկարագիրը**

Մուվերեն վարկավորման տրամադրում Հայաստանին՝ համաֆինանսավորելու Մեղրի քաղաքի մոտակայքում սահմանային անցակետի վերակառուցման և արդիականացման նպատակով Ծրագիրը (Ծրագիր): Մեղրիի սահմանային անցակետի ներկայիս ենթակառուցվածքն արդիական չէ:

Անցակետի գործառնական, տեխնիկական, ինժեներական, բնապահպանական և անվտանգության պայմանները ենթակա են կատարելագործման՝ ապահովելու արդի ապահովության և անվտանգության պահանջները և համապատասխանեցնել սահմանների կառավարման միջազգային ստանդարտներին:

Ծրագիրն առաջնահերթություն է Հայաստանի Հանրապետության համար: Ծրագրին առնչվող գործողությունները տեղակայված են Հայաստանի Հանրապետության տարածքում:

**Ծրագրի նպատակները**

Ծրագիրը միտված է Մեղրիի սահմանային անցակետում ճանապարհի սահմանային անցակետի վերակառուցմանն ու արդիականացմանը: Ծրագիրը ներառում է արդիականությունը կորցրած առկա շինությունների քանդում, նոր արդիական հարմարությունների կառուցում և սահմային, մաքսային և այլ հսկողությունների իրականացման նպատակով ժամանակակից սարքավորումների տեղադրում ժամանակակից ստանդարտներին, ներառյալ ԵՄ ստանդարտներին համապատասխան: Այս ճանապարհով Ծրագիրը կկատարելագործի սահմանային անցակետի ապահովությունն ու անվտանգությունը և կդյուրինացի արդյունավետ սահմանների կառավարման գործընթացը:

**Անցումային ազդեցությունը**

Լավ

Ծրագիրը կկատարելագործի սահմանային անցակետի ենթակառուցվածքի որակական և տեխնիկական պայմանները: Այն նաև կնպաստի Մեղրիի սահմանային անցակետով ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների գործառնական շարունակականությանը՝ այդպիսով նպաստելով նաև տարածաշրջանային անդր-սահմանային ինտեգրմանը: Ի լրումն, Ծրագիրը կաջակցի սահմանային անցակետում կառավարման, վարչարարական և աշխատանքային գործընթացների կատարելագործմանը, ներառյալ Համալիր Սահմանների Կառավարման Գործողությունների Ծրագրի իրականացման միջոցով:

**Հաճախորդի տեղեկատվություն**

Մուվերեն՝ Հայաստանի Հանրապետություն

Ծրագրի իրականացման գործակալությունը Հայաստանի Հանրապետության Պետական Եկամուտների Կոմիտեն է, որը Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային հարցերով զբաղվող կառույցն է:

**Վերակառուցման եվ զարգացման եվրոպական բանկի ֆինանսավորման համառոտ նկարագիր**

10,520,000.00 եվրո

**Ընդհանուր Ծրագրի արժեքը**

26,220,000.00 եվրո

- 10.52 մլն եվրո կտրամադրվի ՎՁԵԲ-ի կողմից;
- 11.27 մլն եվրո կտրամադրվի Եվրամիության Հարևանության Ներդրումային Պլատֆորմի կողմից ;
- 4.21 մլն եվրո կտրամադրվի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից;
- 0.22 մլն եվրո կտրամադրվի Եվրամիության Հարևանության և Գործընկերության գործիքի կողմից (ENPI) Միավորված Ազգերի Զարգացման Գործակալության միջոցով (UNDP):

**Բնապահպանական եվ սոցիալական հարցերի համառոտ նկարագիր**

Համաձայն 2014 թվականի ՎՁԵԲ Բնապահպանական և սոցիալական քաղաքականության նախատեսվող Ծրագիրը դասակարգվում է որպես Բ կատեգորիա, քանի որ հնարավոր ազդեցությունները ակնկալվում են որպես տեղանքին բնորոշ առանձնահատուկ, հեշտությամբ որոշակիացվող և չեզոքացման միջոցառումների միջոցով իրականացվող:

Ծրագրի համար բնապահպանական և սոցիալական պատշաճ ուսումնասիրությունը ընթացիկ է, որը ներառում է երրորդ կողմի անկախ բնապահպանական և սոցիալական աուդիտ՝ գնահատելու Հաճախորդի կառավարման կարողությունները և համակարգերը, որոնք անհրաժեշտ են կառավարելու հաճախորդի գործողությունների ընթացքում բնապահպանական, անվտանգության և աշխատանքային հիմնահարցերը և Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների և օգուտների ներուժը: Այն նաև գնահատելու է Հաճախորդի՝ Ծրագրի իրականացման կարողությունը Բանկի կատարողական պահանջներին համապատասխան:

Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիրը պատրաստվելու է Ծրագրի համար: Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան է մշակվելու, որը կներառի բողոքների մեխանիզմը, ինչպես նաև հողերի ձեռքբերման և անհրաժեշտ տարաբնակեցման պլանը: Բնապահպանական և սոցիալական կատարողականը և համաձայնեցված Գործողությունների ծրագրի համառոտագիրը կներկայացվեն շահագրգիռ կողմերին: Այս փաստաթուղթը կլրամշակվի պատշաճ ուսումնասիրության արդյունքների պարզ լինելուց հետո:

**Տեխնիկական համագործակցություն**

Ստորագրումից հետո: Ծրագրի Իրականացման Միավորի աջակցություն (0.7 մլն եվրո), ակնկալվում է Եվրամիության Հարևանության Ներդրումային Պլատֆորմի կողմից:

## Ընկերության կոնտակային տեղեկատվություն

Գոհար Մնացականյան

[gohar\\_mnacakanyan@taxservice.am](mailto:gohar_mnacakanyan@taxservice.am)

+374 (060) 544 363

<https://www.gov.am/en/bodies-under-government/230/>

3 Մ. Խորենացի, Երևան, Հայաստանի Հանրապետություն

## Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների հարցերով կապվել հախաճորդի ընկերության հետ:

Պետական հատվածի ծրագրերի համար այցելել ՎՋԵԲ գնումների բաժին.

Հեռ: +44 20 7338 6794

Email: [procurement@ebrd.com](mailto:procurement@ebrd.com)

## Ընդհանուր հարցումներ

ՎՋԵԲ ծրագրի՝ գնումների հետ կապ չունեցող հարցումներ.

Հեռ: +44 20 7338 7168

Email: [projectenquiries@ebrd.com](mailto:projectenquiries@ebrd.com)

## Հանրային տեղեկատվության քաղաքականություն

Հանրային տեղեկատվության քաղաքականությունը սահմանում է, թե ինչպես է ՎՋԵԲ-ը տարածում տեղեկատվությունը և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ՝ ապահովելու առավել լավ իրազեկվածություն և իր ռազմավարությունների, քաղաքականությունների և գործողությունների ընկալում: Խնդրում ենք այցելել Հանրային տեղեկատվություն քաղաքականության էջը ստորև՝ գտնելու ինչպես կարելի է հայցել Հանրային հատվածի խորհրդի զեկույցը:

## Ծրագրի բողոքարկման մեխանիզմ

Ծրագրի բողոքարկման մեխանիզմը ՎՋԵԲ հաշվետվողականության մեխանիզմ է: Այն ապահովում է ՎՋԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի վերաբերյալ անհատների և կազմակերպությունների կողմից բողոքների անկախ գնության, որոնք , պատճառել կամ ենթադրվում է, որ կարող են պատճառել բնապահպանական և/կամ սոցիալական վնաս:

Խնդրում ենք այցելել Ծրագրի բողոքարկման մեխանիզմի էջ՝ գտնելու տեղեկատվություն բողոքի ներկայացման վերաբերյալ: Բողոքարկման մեխանիզմի մասնագետը ([pcm@ebrd.com](mailto:pcm@ebrd.com)) հասանելի է պատասխանելու ցանկացած հարցի, որը կարող է առաջանել կապված բողոքի ներկայացման հետ կամ գրացման և հասանելիության չափանիշների հետ համաձայն Ծրագրի բողոքարկման մեխանիզմի ընցակարգերի կանոնների: